

# ՐՕՇՐՕՇՏՐԱՅ



## Կամավոր բժշկական ապահովագրություն Հոգալով ամենակարևորի մասին



**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ**

**ԱՊԱՀՈՎԱԴԻՐ**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՐ**

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ  
ՏԱՐԱՃՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ**



«Ռոսգոստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ



«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամ

HI010553

01.01.2017 – 31.12.2017

ՀՀ, ԼՂՀ



# ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ՍՏԱՆԴԱՐՏ 3

1. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍԱՅՄԱՆԱԶԱՓԵՐ
<p>Նախատեսված բժշկական ծախսերը հատուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, որ իրականացված բուժումը և /կամ բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:</p> <p>Ապահովագրության տարածք՝ ՀՀ, ԼՂՀ:</p> <p>Ծրագրով նախատեսված ծառայությունների և հիվանդությունների բուժման հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ դեպքերում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Անհետաձգելի բուժում պահանջող հիվանդություններ և վիճակներ</li> <li>✓ Սուր հիվանդություններ և վիճակներ</li> <li>✓ Քրոնիկ հիվանդությունների սրացումներ</li> </ul> <p>Ծրագրերով նախատեսված ծառայությունները ենթակա են հատուցման կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրի ներքո ապահովագրված յուրաքանչյուր անձին՝ իր ապահովագրության գործողության ժամկետում:</p>	
<p><b>1.1. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ</b> իրականացվում է Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում</p> <p>1.1.1. Թերապևտիկ խորհրդատվություն 1.1.2. Տեսողության ստուգում 1.1.3. Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն 1.1.4. Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) 1.1.5. Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուրոլոգի խորհրդատվություն 1.1.6. Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով 1.1.7. Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում՝ մամոգրաֆիական հետազոտություն <i>Ներքոնշյալ հետազոտությունն իրականացվում է պարտադիր կարգով՝</i> 1.1.8. Ֆլյուորոգրաֆիա</p>	1 անգամ
<p><b>1.2. ՀՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>1.2.1. Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց, այդ թվում՝ մասնագիտացված 1.2.2. Բժշկի առաջնային զննում, նախնական ախտորոշում 1.2.3. Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում կանչի վայրում 1.2.4. Անհետաձգելի բուժման դեղորայքային ապահովում 1.2.5. Հիվանդի տեղափոխում Բժշկական հաստատություն առանձնակի դեպքերում, երբ անհրաժեշտ է հատուկ կահավորված սանիտարական տրանսպորտ և անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցություն</p>	Հատուցվում է
<p><b>1.3. ԱՄՔՈՒՍԱՆՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>1.3.1. Խորհրդատվական ընդունելություններ բժիշկ-մասնագետների կողմից, այդ թվում՝ նեղ մասնագետների 1.3.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում 1.3.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում 1.3.4. Վնասվածքների (կոտրվածքներ, հողախախտեր, փափուկ հյուսվածքների սալքարո, վերքեր կամ դրանց համակցում) բուժում ամբուլատոր պայմաններում 1.3.5. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ամբուլատոր պայմաններում 1.3.6. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում 1.3.7. Թունավորման թեթև ձևերի ամբուլատոր բուժում 1.3.8. Լաբորատոր ախտորոշում. համակլինիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական 1.3.9. Գործիքային ախտորոշում. ռենտգենաբանական հետազոտություն, ուլտրաձայնային հետազոտություն, ֆունկցիոնալ, ԷՆՐՍԿՊԿԻԿ զննումներ, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա</p>	Հատուցվում է
<p><b>1.4. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>1.4.1. Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում 1.4.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.5. Վնասվածքների (կոտրվածքներ, հողախախտեր, վերքեր, սալքարոներ, պոլիտրավմաներ) բուժում ստացիոնար պայմաններում, բացառությամբ վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների 1.4.6. Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.7. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.8. Թունավորումների բուժում ստացիոնար պայմաններում 1.4.9. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում 1.4.10. Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ կորոնարոգրաֆիան, հատուցվում են այն դեպքում, երբ այդ</p>	Հատուցվում է



<p>հետազոտությանը հաջորդում է ճրագրով նախատեսված վիրահատական միջամտություն</p> <p>1.4.11. Սրտանոթային միջամտություններ և վիրահատություններ.  <b>Միջամտություններ`</b>          1.4.11.1. Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)          1.4.11.2. Բալունային անգիոպլաստիկա դեղապատ ստենտով  <b>Վիրահատություններ`</b>          1.4.11.3. Աորտակորոնար շունտավորում          1.4.11.4. Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում` աորտայի անևրիզմալի շերտազատում)</p>	Հատուցվում է								
1.4.12. Անոթային վիրահատություններ և միջամտություններ	Հատուցվում է								
1.4.13. Նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ	Հատուցվում է								
1.4.14. Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում	Հատուցվում է								
1.4.15. Բժշկական հաստատությունում կացության ծախսերի (հիվանդասենյակի արժեքի) հատուցում	Օրական 10,000 ՀՀ դրամի սահմաններում								
<b>1.5. ՔՐՈՆԻԿ ԶԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ</b>									
1.5.1. Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ	1 սրացում								
1.5.2. Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ	1 սրացում								
<b>1.6. ԶՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆՂՕՂՈՒԹՅՈՒՆ*</b>									
1.6.1. Պետական ծրագրից դուրս հղիության հսկողություն	60,000 ՀՀ դրամի սահմաններում								
1.6.2. Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ)									
1.6.3. Զղիության ընդհատում բժշկական ցուցումներով									
1.6.4. Զետննդյան շրջանում հիվանդասենյակում կացության ծախսերի հատուցում` առավելագույնը 10 օր	Օրական 10,000 ՀՀ դրամի սահմաններում								
* Բացառություն են հանդիսանում հղիության ընթացքի կամավոր ընդհատման համար կատարված ծախսերը, եթե առկա չեն ամողջությանը կամ կյանքին սպառնացող վիճակներ:									
<b>1.7. ԱՎՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*</b>									
1.7.1. Ախտորոշում	Հատուցվում է								
1.7.2. Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով									
* Բացառություն են հանդիսանում` կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվող վիրաբուժությունը:									
<b>1.8. ԱՏԱՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*</b>									
1.8.1. <b>Ախտորոշում և Թերապիա</b> ✓ Ռենտգեն ✓ Կարիեսի բուժում ✓ Ուղիների մշակում ✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով	40,000 ՀՀ դրամի սահմաններում								
1.8.2. <b>Վիրաբուժություն</b> ✓ Ատամի պարզ հեռացում ✓ Ատամի բարդ հեռացում ✓ Իմաստության ատամի հեռացում	3,000 ՀՀ դրամ 5,000 ՀՀ դրամ 10,000 ՀՀ դրամ								
* ա) Բացառություն են հանդիսանում այն ատամների մասով կատարված ծախսերը, որոնք նախնական բուժման արդյունքում արձանագրվել են որպես` պլոմբավորված, կարիեսով և/կամ նրա բարդություններով (պուլպիտ, պերիոդոնտիտ) անտահարված, օրոպպեդիկ կոնստրուկցիաների տակ գտնվող ատամներ, բացառվում են նաև Եսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը, լուղերի բուժման ծախսերը: բ) Եթե Ապահովագրված անձը չի բուժվում Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կլինիկայում, ապա Ապահովագրողի պահանջով պետք է անցնի հետբուժական հետազոտություն իր կողմից նշված կլինիկայում:									
<b>1.9. ԴԵՂՈՐԱՅԵ</b>									
1.9.1. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում	Հատուցվում է								
1.9.2. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն «Ալֆա Ֆարմ», «Նատայի Ֆարմ» և «Դոկ» դեղատների ցանցից									
<b>1.10. ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԾԻՔ</b>									
1.10.1. Եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա իր հաշվին անցնում է 2-րդ հետազոտությունը և, եթե եզրակացությունները Էապեն տարբերվում են, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ուղրտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Այն դեպքում, եթե 3-րդ կարծիքը Էապեն տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:	Նախատեսված է								
<b>1.11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b>									
1.11.1. Պայմանագրի ներքո կարող են ապահովագրվել միայն Ապահովագրի աշխատողները և Պայմանագրով ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները` մինչև 65 տարեկան ամուսին/կին, մինչև 18 տարեկան զավակ: Ընտանիքի անդամների համար գործում են հետևյալ ապահովագրավճարները`									
	<table border="1"> <thead> <tr> <th>ՏԱՐԻՔՅՈՒՆ ԽՈՒՄԲ</th> <th>ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿՏԱՐ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>0-17</td> <td>52,000</td> </tr> <tr> <td>18-40</td> <td>98,800</td> </tr> <tr> <td>41-65</td> <td>109,200</td> </tr> </tbody> </table>	ՏԱՐԻՔՅՈՒՆ ԽՈՒՄԲ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿՏԱՐ	0-17	52,000	18-40	98,800	41-65	109,200
ՏԱՐԻՔՅՈՒՆ ԽՈՒՄԲ	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿՏԱՐ								
0-17	52,000								
18-40	98,800								
41-65	109,200								

- 1.11.2. Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը:
- 1.11.3. Ոչ պայմանական չփոխհատուցվող գումար՝ չի կիրառվում:
- 1.11.4. Ապահովագրված անձինք պարտավորվում են անցնել նախնական ատամնաբուժական հետազոտություն: Նախնական ատամնաբուժական զննությունը կազմակերպում է Ապահովագրողը: Ապահովագրված անձին տրամադրվում է 3 շաբաթյա ժամկետ Ապահովագրողի կողմից նշված ատամնաբույժի մոտ նախնական զննություն անցնելու համար: Նշված ժամկետում նախնական ատամնաբուժական զննությունը չանցնելու դեպքում տվյալ Ապահովագրված անձի համար ատամնաբուժական ծածկույթը ուժի մեջ չի մտնում:
- 1.11.5. Ապահովագրված անձ-աշխատողների նկատմամբ տարիքային սահմանափակում չի կիրառվում:
- 1.11.6. Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:
- 1.11.7. Նշանակված դեղորայքը կամ փստորոշիչ հետազոտությունները հատուցվում են միայն այն հիվանդությունների կապակցությամբ, որոնք ներառված են ճրագրում:

## 2. ԲԱՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻՑ

### Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.

- 2.1. Մինչև ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները, դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն
- 2.2. Ապահովագրական պատահարները, որոնց տեղի ունենալու մասին Ապահովագրված անձը (նրա օրինական ներկայացուցիչը) չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարի մասին հայտնելն անհնար է եղել: Վերջին դեպքում Ապահովագրված անձը պետք է դա իրականացնի առաջին իսկ հնարավորության դեպքում
- 2.3. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը
- 2.4. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը
- 2.5. Վնասվածքներ, որոնք հասցվել են ակտիվ, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ակտիվային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ակտիվիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները
- 2.6. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառով: Ինքնասպանության փորձ
- 2.7. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բժավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ
- 2.8. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելագույն սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ
- 2.9. Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները
- 2.10. Տուբերկուլոզ
- 2.11. Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երկվամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ
- 2.12. Շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները
- 2.13. Քնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի Էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ)
- 2.14. Անպտոդություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտությունները
- 2.15. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում
- 2.16. Բուժխնամք, բժշկի տնային կանչ
- 2.17. Հիվանդությունների պլանային և պահպանողական բուժում, բացառությամբ սույն Հավելվածի 1.4.14 կետի
- 2.18. Քրոնիկ հիվանդությունների դիմամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ
- 2.19. Չորորակ ուռուցքային հիվանդությունների ոչ վիրահատական բուժում
- 2.20. Բացիլարության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը
- 2.21. Ֆիզիոթերապիա, լազերաթերապիա, կինեզոթերապիա, վերականգնողական բուժում, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական փստորոշում, Էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, Էներգիինֆորմատիկա, ցուրթթերապիա, Էլեկտրասեղնաբուժություն, հիբրոդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպատիա, փստորոշում ֆոլի մեթոդով և այլն
- 2.22. Կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խտաբույսեր, տարբեր ծագման յուղեր
- 2.23. Այն ծառայությունները, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն
- 2.24. Էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա
- 2.25. Էնդոպրոթեզավորում, օրգանների փոխպատվաստում, վնասվածքաբանական վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաներ
- 2.26. Պրոթեզներ, իմպլանտներ, հարմարանքներ (օպտիկական ապակիներ/լինզաներ, շրջանակներ, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն), բժշկական պարագաներ, սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում
- 2.27. Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտակներ, պտկիկներ, գորտուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ

- 2.28. Նյարդային համակարգի դեմիելինիզացիոն հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պտորիազ, օնխիտոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)
- 2.29. Հոգեբերապատի ծառայություններ, հիպնոս: Ներողներ և սահմանային վիճակներ (Նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետատոնոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-ներոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ
- 2.30. Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում
- 2.31. Ատամնաբուժության մեջ ցանկացած տեսակի պրոթեզավորում, պրոթեզավորման նախապատրաստում, թերմոֆիլների, անկերային բույթերի օգտագործում, օրթոդոնտիա, օրթոպեդիա, լնդերի բուժում
- 2.32. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում
- 2.33. Շրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք

### 3. ՀԱՅՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

#### 3.1. Եթե անհրաժեշտ է բժշկական օգնություն

Հարկավոր է զանգահարել ապահովագրական քարտի վրա նշված 24/7/365 ռեժիմով աշխատող կոնտակտ կենտրոնի հեռախոսահամարով՝ 012 888888 կամ հայտը գրանցել Ապահովագրողի էլեկտրոնային կայքում՝ [www.RGS.am](http://www.RGS.am):

Շուրջօրյա զանգերի սպասարկման կենտրոնի միջոցով կապ կհաստատվի բժշկ-փորձագետների հետ, ովքեր կպատասխանեն հայտերի կարգավորման հետ կապված բոլոր հարցերին.

- ✓ կօգնեն ընտրել բուժհաստատություն,
- ✓ կգրանցեն ընդունելության համապատասխան մասնագետի մոտ,
- ✓ կտրամադրեն տեղեկատվություն հատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Շտապ կամ անհետաձգելի օգնության անհրաժեշտության դեպքում հարկավոր է զանգահարել ապահովագրական քարտի վրա նշված շտապ օգնության հեռախոսահամարներից որևէ մեկով, այնուհետև գրանցել հայտը 24 ժամվա ընթացքում:

#### Հայտը գրանցելուց հետո.

- ✓ Ապահովագրված անձը կարող է սպասարկվել համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում ընդգրկված հաստատությունում, որտեղ սպասարկումն իրականացվում է անվճար, եթե դեպքը Ապահովագրողի կողմից հաստատվում է որպես ապահովագրական:
- ✓ Ապահովագրված անձը կարող է սպասարկվել համագործակցող բժշկական հաստատությունների ցանկում չընդգրկված հաստատությունում, որի դեպքում վճարումներն իրականացնում է ինքնուրույն և այնուհետև ներկայացնում բուժօգնությունը հիմնավորող վճարային և բժշկական փաստաթղթերը Ապահովագրողին:

#### 3.2. Հայտը կարգավորելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

3.2.1. **Հայտային դիմում**, որը լրացվում է հայտատուի կամ նրա օրինական ներկայացուցչի (եթե Ապահովագրված անձն անչափահաս է), ամուսնու/կնոջ կողմից:

#### 3.2.2. Բժշկական փաստաթղթեր

*Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության դեպքում՝*

3.2.2.1. Բժշկական տեղեկանք\*, որտեղ պետք է նշված լինի՝

- ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու ամսաթիվը,
- ✓ կատարված և/կամ նշանակված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
- ✓ վերջնական ախտորոշումը,
- ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը):

\*Տեղեկանքը պետք է լրացված լինի բժշկի կամ բուժօգնության բաժնի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից:

3.2.2.2. Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները:

*Ստացիոնար բուժման դեպքում՝*

3.2.2.3. Եպիկրիզ\* (քաղվածք հիվանդության պատմությունից), որտեղ պետք է նշված լինի՝

- ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու և դուրսգրման ամսաթիվը,
- ✓ կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
- ✓ վերջնական ախտորոշումը,
- ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը)

\*Եպիկրիզը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բժշկական հաստատության կնիքով:

3.2.2.4. Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները:

#### 3.2.3. Ֆինանսական փաստաթղթեր

*Եվ՝ ամբուլատոր-պոլիկլինիկական, և՛՝ ստացիոնար բուժման դեպքում՝*

- ✓ Դեղերի գնման դեպքում՝ ՀՀԿ կտրոն և տրամադրված դեղորայքի անվանացանկը,
- ✓ ՀՀԿ կտրոն, ԴՍՕԱ կամ հաշիվ-ապրանքագիր (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի բուժօգնության կնիքով):

#### 3.2.4. Հատուցում ստանալու համար ներկայացվող փաստաթղթեր

- ✓ Անձնագիր կամ նույնանվանացման քարտ (վերջիններս ներկայացնում են այն դեպքում, եթե Ապահովագրված անձը հատուցումը ստանալու է կանխիկ Ապահովագրողի գրասենյակից),
- ✓ ծննդյան վկայականի պատճեն (եթե ապահովագրված անձն անչափահաս է, փաստաթղթերը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ հայր/մայր),
- ✓ ապահովագրական քարտ:

3.2.5. «Աֆա Ֆարմ», «Նատալի Ֆարմ» և «Դոկ» դեղատների ցանցից նշանակված դեղամիջոցները ձեռք բերելու ընթացակարգը

Ապահովագրված անձը պետք է բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսը ներկայացնի Ապահովագրողի գրասենյակ, որտեղ վերոնշյալ դեղատոմսի հիման վրա նրան կտրամադրեն Ապահովագրողի կողմից հաստատված նմուշի «Նշանակման թերթիկ»: Վերջինս ապահովագրական քարտի և անձնագրի հետ միասին «Ալֆա Ֆարմ», «Նատալի Ֆարմ» և «Դոկ» դեղատների ցանցի որևէ դեղատանը ներկայացնելու դեպքում Ապահովագրված անձը անվճար կստանա դեղատոմսում նշված դեղամիջոցները:

Փաստաթղթերը, այդ թվում հայտային դիմումը, կարելի է ներկայացնել Ապահովագրողին ցանկացած աշխատանքային օր հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Առձեռն (մինչև ժամը 16:00)
- ✓ \* Էլ. փոստով (medical@rgs.am)
- ✓ \* Ֆաքսով (060 62 22 29)

\* Ի պատասխան տրամադրվում է նախնական մասնագիտական կարծիք հայտային գործի վերաբերյալ: Էլեկտրոնային փոստով կամ Ֆաքսով ուղարկված բոլոր փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն Ապահովագրողի գրասենյակ հայտը ներկայացնելու օրվանից 10 օրվա ընթացքում:

### **3.3. Ժամկետներ**

3.3.1. Ապահովագրողի/Ապահովագրված անձի կողմից ապահովագրական պատահարը և բժշկական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ապահովագրողին բժշկական ծախսերը կատարելուց հետո առավելագույնը 45 օրվա ընթացքում:

3.3.2. Յուրաքանչյուր բացված հայտային գործ ավտոմատ փակվում է հայտի գրանցման պահից 3 ամիս հետո: Տվյալ հայտային գործը շարունակելու համար հարկավոր է կրկին հայտ գրանցել վերը ներկայացված ձևով:

### **3.4. Հատուցման ընթացակարգ**

Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն բժշկական ծախս կատարելու դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Կանխիկ
- ✓ Անկանխիկ

Կանխիկ եղանակով հատուցումը տրամադրվում է 70,000 ՀՀ դրամի սահմաններում, իսկ եթե հատուցման ենթակա գումարը գերազանցում է 70,000 ՀՀ դրամը, կատարվում է փոխանցում Ապահովագրված անձի բանկային հաշվին:

Կանխիկ եղանակով հատուցում ստանալու համար Ապահովագրված անձը պետք է ներկայացնի անձնագիր:

#### 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Երևան	Բժշկական Հաստատություն	Հասցե
4.1.	«Նաիրի» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Պարոնյան 21
4.2.	«Սիրմեդ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Փավստոս Բուզանդի փող., 7 շենք
4.3.	«Էրեբունի» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Տիտոգրայան փող., 14 շենք
4.4.	«Մալաթիա» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Դանիել Վարուժանի փող., շենք 28ա
4.5.	«Յերազի» №1 Հիվանդանոցային Համալիր (Երևանի Մխիթար Յերացու Անվան Պետական Բժշկական Համալսարանի)	ք. Երևան, Աբովյան փող., 58 շենք
4.6.	«Մուրացան» Հիվանդանոցային Համալիր	ք. Երևան, Մուրացանի փող., 114 շենք
4.7.	Բեգլարյան Կենտրոն	ք. Երևան, Աբովյան փող., 56 շենք
4.8.	«Արաբկիր» Բժշկական Համալիր /Երեխաների և Դեռահասաների Առողջության Ինստիտուտ/	ք. Երևան, Մամիկոնյանց փող., 30 շենք
4.9.	«Քանաքեռ-2եյթուն» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան փող., 7 շենք
4.10.	«Արմենիա» Հանրապետական Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Մարգարյան փող., 6 շենք
4.11.	«Սլավմեդ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 3-րդ նրբ., 4/2 շենք
4.12.	«Իզմիրյան» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Ահարոնյան փող., 6 շենք
4.13.	Միքայելյան Վիրաբուժության Կենտրոն	ք. Երևան, Էզրաս Հարաթյան փող., 9 շենք
4.14.	«Վիկմեդ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Կոմիտասի պող., 43/1 շենք, №1
4.15.	Ժամանակակից Վիրաբուժության Կլինիկա	ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., 13/4 շենք
4.16.	«Առիգ-Մեդ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Կլիկիա թաղամաս, Բարձրաբերդի փող., 7/7 շենք
4.17.	Ֆանարչյանի անվան Ուռուցքաբանական Կենտրոն	ք. Երևան, Ֆանարչյան 76
4.18.	Բժշկական գենետիկայի եւ առողջության առաջնային պահպանման կենտրոն	ք. Երևան, Աբովյան փող., 34/3 շենք
4.19.	«Արամյանց» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Ձորափի փող., 40 շենք
4.20.	«Լեբեն» Բժշկական Կենտրոն (Երևան Բժշկական Կենտրոն)	ք. Երևան, Բագրատունյաց 1
4.21.	Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ	ՀՀ, ք. Երևան, Պ. Սևակի 5
4.22.	«Այ.Սի.2եթ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Ամիրյան փող. 4/6 շ., 141 տարածք
4.23.	«Ավանգարդ Մեդ» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Ներսիսյան 7
4.24.	«ՄեդԵքսպրես» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան փող., 22 շենք
4.25.	«Սանուս վիտա» Բժշկական Կենտրոն	ք. Երևան, Կիլյան 16
4.26.	«Մեփլ Լիֆս» Հայ-Կանադական Բժշկական Կլինիկա	ք. Երևան, Ա. Արմենակյան 129/4
4.27.	«ԷՖ Սի Մեդիկալ» ՍՊԸ	ք. Երևան, Սարմենի 90տ.
4.28.	«ԱՐՄԵԴ» Բժշկական Վերականգնողական Կենտրոն	ք. Երևան, Քանաքեռ, Ծարավ Աղբյուրի փող., 55ա շենք
4.29.	«Աքսիոմեդ» Վնասվածքաբանական-Վերականգնողական Կլինիկա	ք. Երևան, Տերյան 3 շենք, 42 տարածք
4.30.	Մայայանի անվան Ակնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Ֆուչիկի փող., 30 շենք
4.31.	«Օպտոմեդ» Հայ-Կանադական Ակնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Ալեք Մանուկյան փող., 9 շենք, սեն. 102, 202, 203
4.32.	«Սրուբեան» Ակնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Տերյան փող. 105/1, տարածք 4/5
4.33.	8-րդ Քաղաքային Պոլիկլինիկա	ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պող., 51ա շենք
4.34.	«ԿՐՄԻ ԲԱԿ-Երևան» Ախտորոշիչ Կենտրոն	ք. Երևան, Բագրատունյաց փող., 1 շենք («Երևան» բժշկական կենտրոնի շենքում)
4.35.	«Վիտալայն» Բժշկական և Լաբորատոր-Ախտորոշիչ Կենտրոն	ք. Երևան, Պռոշյան փող., 2/2 շենք
4.36.	«Դիալաք» Կլինիկական Ախտորոշիչ Լաբորատորիա	ք. Երևան, Մամիկոնյանց փող., 41 շենք
4.37.	«Կամար» Ատամաբուժական Կլինիկա («Սմարթթենտ» ՍՊԸ)	ք. Երևան, Սայաթ-Նովայի պող., 26 շենք, №8, 10
4.38.	«Արտ Կլասիկ դենտ» Ատամաբուժական Կենտրոն	ք. Երևան, Մոլդովական փող. 3/135
4.39.	«Յեփի Սմայլ» Ատամաբուժական Կենտրոն	ք. Երևան, Պուշկինի 21/3
4.40.	«Մեդլոք» Ատամաբուժական Կենտրոն	ք. Երևան, Բաղրամյան 59գ , 10
4.41.	«Ագաթ դենթ» Ատամաբուժական Կենտրոն	ք. Երևան, Բաղրամյան 33ա, բն. 29
4.42.	ԱՁ Հայկ Ստեփանյան (Ատամաբուժարան)	ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 3/76
4.43.	ԱՁ Պարսամ Դիլանյան («Դեյուքս» Ատամաբուժական Կենտրոն)	ք. Երևան, Կոյունի փող. 7/1, բն. 7
4.44.	ԱՁ Կարեն Ալիխանյան (Ատամաբուժարան)	ք. Երևան, Մաշտոցի փող. 7/4
4.45.	ԱՁ Գրիգոր Ավետիսյան (Ատամաբուժարան)	ք. Երևան, Էրեբունի 7
4.46.	ԱՁ Կարինե Սարգսյան (Ատամաբուժարան)	ք. Երևան, Դ. Դեմիրճյան փող., տուն 26
4.47.	Ա/Ձ Մարինե Խաչատրյան (Ատամաբուժարան)	ք.Երևան Հ. Հակոբյան 3/2, բն. 11
4.48.	Ա/Ձ Միքայել Շիրազյան (Ատամաբուժարան)	ք.Երևան, Վարդանանց 11, բն. 23
4.49.	«Նորո ՎՍ» Գեղեցկության Ակադեմիա և Ատամաբուժական Կենտրոն	ք. Երևան, Հյուսիսային պող., 5 շենք, տարածք 183
4.50.	Համալսարանական Ստոմատոլոգիական №1 Պոլիկլինիկա	ք. Երևան, Աբովյան փող., 58 շենք
4.51.	Համալսարանական Ստոմատոլոգիական №2 Պոլիկլինիկա	ք. Երևան, Մամիկոնյանց փող., 30 շենք
4.52.	Համալսարանական Ստոմատոլոգիական №3 Պոլիկլինիկա	ք. Երևան, Կոյունի փող., 2 շենք
4.53.	«Լիդեր-ԷՖ» Ատամաբուժական Կենտրոնների Ցանց (ԱՁ ժան Շահվերդյան)	ք. Երևան, Կարապետ Ուլենցու փող., 31 շենք

4.54.	«Ավադենտ» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Գյուլբենկյան փող., 30/3 շենք, տարածք 130
4.55.	«Եվրոդենտ» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Շինարարների փող., 15/1 շենք
4.56.	«Էյ Ջի Էյջ Լաբորատորի» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Նոր Նորքի 1-ին միկրոշրջան, Լվովյան փող., 108/2 շենք
4.57.	«ԴենտԱրտիս» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Երևան, Պարոնյան 4/1 (մուտքը Մաշտոցի պողոտայից՝ Փակ Շուկայի հարևանությամբ)
4.58.	Արփինե-Մեդ Ատամնաբուժական Կենտրոն	ք.Երևան, Նորքի 1-ին զանգված, Լանսենի 1
<b>Արմավիր</b>		
4.59.	Վաղարշապատի Բժշկական Կենտրոն	ք.Էջմիածին,Սպանդարյան 1
4.60.	Մեծամորի Բժշկական Կենտրոն	ք.Մեծամոր
<b>Կոտայք</b>		
4.61.	Հրազդանի Բժշկական Կենտրոն	ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թղմ., Պուրակային 32
4.62.	Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի Բժշկական Կենտրոն	ք. Աբովյան, Հատիսի 6
<b>Արարատ</b>		
4.63.	«Արարատի Հիվանդանոց» Բժշկական Կենտրոն	ք. Արարատ, Խանջյան 59
4.64.	Արտաշատի Բժշկական Կենտրոն	ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 116
4.65.	«Արտ-Ստոմ» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Արտաշատ, Մարքսի 11ա
<b>Արագածոտն</b>		
4.66.	Թալինի Բժշկական Կենտրոն	ք. Թալին, Քոթանյան 10
4.67.	Ծաղկահովիտի Բժշկական Կենտրոն	գ. Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան 16
4.68.	Աշտարակի Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա	ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու 33ա
<b>Գեղարքունիք</b>		
4.69.	Սևանի Հիվանդանոց	ք. Սևան, Լճափ 1
4.70.	«Քրոսա Մեդ» Բժշկական Կենտրոն	ք. Գավառ, Սայաթյան 2/3
4.71.	ԱԶ Ռուբեն Դուկասյան (Ատամնաբուժարան)	ք.Սևան, Դեմիրճյան 3
<b>Լոռի</b>		
4.72.	Ստեփանավանի Բժշկական Կենտրոն	ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1
4.73.	Վանաձորի Բժշկական Կենտրոն	ք. Վանաձոր, Բանակի 8
4.74.	Սպիտակի Բժշկական Կենտրոն	ք. Սպիտակ, Երեւանյան խճ. 1
4.75.	Ալավերդու Բժշկական Կենտրոն	ք. Ալավերդի, Սայաթ-Նովայի փող., 20 շենք
4.76.	Ստեփանավանի Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա	ք. Ստեփանավան, Հ. Մեղապարտի 13
4.77.	«Վանամեդ» Բժշկա-Ստոմատոլոգիական Կենտրոն	ք. Վանաձոր, Չաքարյան փող., 29 շենք
4.78.	Ալավերդու Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա	ք. Ալավերդի, Ջրավազանի 2ա
<b>Տավուշ</b>		
4.79.	Իջևանի Բժշկական Կենտրոն	ք. Իջևան, Նալբանդյան 1
4.80.	«Իռ-Վինգ» Բժշկական Կենտրոն	ք.Դիլիջան Գորկու փ. 90
4.81.	«Նիկոլայ Նասիբյանի Նոյեմբերյանի Բժշկական Կենտրոն	ք. Նոյեմբերյան, 26 Կոմիսար 1
<b>Սյունիք</b>		
4.82.	Կապանի Բժշկական Կենտրոն	ք. Կապան, Մելիք-Ստեփանյան փող., 13 շենք
4.83.	Գորիսի Բժշկական Կենտրոն	ք. Գորիս, Գրիգոր Տաթևացու փող., 31 շենք
4.84.	ԱԶ Արթուր Անաստասյան (Ատամնաբուժարան)	ք.Կապան, Ճահումյան փողոց, շենք 27, բնակարան 33
4.85.	«Վովադենտ» Ատամնաբուժական Կենտրոն	ք.Կապան, , Հունան Ավետիսյան փող., 4 շենք, բն.1
<b>Վայոց Ձոր</b>		
4.86.	ԱԶ Ռոբերտ Սինյակին (Ատամնաբուժարան)	ք.Եղեգնաձոր, Լարեկացու փող.
<b>Շիրակ</b>		
4.87.	Գյումրի Բժշկական Կենտրոն	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի փող., 3/3 շենք
4.88.	Ախուրյանի Բժշկական Կենտրոն	գ. Ախուրյան
4.89.	«Ստոմա-Էլիտ» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Գյումրի, Շիրակացի 61 թղմ.,15 շենք, բն. 2
4.90.	«Ստոմա-Ստիլ» Ատամնաբուժական Կենտրոն	ք. Գյումրի, Ռուսթավելի 39
4.91.	Ա/Ձ Սարգիս Նազարեթյան (Ատամնաբուժարան)	ք. Գյումրի, Ղանդիլյան փող., 84 շենք, բն. 25
<b>ԼՂՀ</b>		
4.92.	ԱՆ Հանրապետական Բժշկական Կենտրոն	ք. Ստեփանակերտ, Բաղրամյան 9

Պայմանագրի գործողության ընթացքում Համագործակցող բժշկական հաստատությունների ցանկը կարող է փոփոխվել, թարմացված ցանկը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.rgs.am/arm/262/page.html>:

Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում: Այն դեպքում, երբ Ապահովագրված անձը դիմում է այլ Բժշկական հաստատություն, որը ներառված չէ վերոնշյալ ցանկում, ապա ապահովագրական հատուցման կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը, ներկայացումն Ապահովագրողին, ինչպես նաև բուժճառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Ապահովագրված անձի կողմից, որից հետո հայտի կարգավորումը իրականացվում է համաձայն «Հայտերի կարգավորման ընթացակարգի»: